

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՀՆՈՒՑ ՄԻՆՁԵՆԻ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Գրեց

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱԽՍՈՒՐԵԱՆ

Տպ. ՏՕՖԻԿԵԱՄ, ՊԵՂՈՒՔ 1974, էջ 596:

Մեր Հայրենի երկրին տեղագրութեան շարքերը ստուարացած են վերջին տասնամեակներու ընթացքին: Ուրբերդի, Մալաթիայի, Ալեյի, Գղիի եւ ուրիշ շատ վայրերու տեղագրութիւններէն վերջ, 1974ին լոյս տեսաւ Բալահովիտի ազգագրական, պատմա-տեղագրական Հատորը, շուրջ 600 էջոց գիրք մը:

Հեղինակը ամերիկացի, իր Հայրենի երկրին տեղագրութեան հետ մեղի կու տայ նաեւ անոր պատմութիւնը, հին շրջաններէն սկսեալ մինչեւ մեր օրերը: Ակնարկ մը տալով բովանդակութեան, կը հասկնանք թէ հեղինակը մեծ աշխատանք կատարած է եւ երկար տարիներ դրած այս գործը ի կատար հասցնելու համար: Ան բազմաթիւ հին եւ նոր աղբիւրներ աչքէ անցուցած է, ինչպէս ինքը եւս կ'ըսէ, մեղուաբար պրպտած է զանոնք, եւ քաղած՝ ինչ որ կը վերաբերէր իր երկրին անցեալին եւ ներկային:

Յարութիւն Զախսուրեան, Բալահովիտի անուան տակ, մեղի կու տայ ոչ միայն Մոսկուի աշխարհի անցեալ ու ներկայ պատմութիւնը, այլ եւ Հայաստանի շրջակայ նահանգներուն տեղագրութիւնը, պատմութիւնը, քաղաքակրթութիւնը, մշակոյթը եւ ընդարձակ ծանօթութիւններ հոն ապրած եւ գործած դէմքերուն շուրջ:

Գիրքը երեք մասերու կը բաժնուի. առաջին մասով կը տրուի ընդարձակօրէն Հայոց պատմութիւնը - ինչ որ՝ ըստ մեզի՝ կրնար զանց առնուիլ կամ համառօտիւ ներկայացուիլ -, նախահայրական (ուրարտական) շրջանէն սկսելով մինչեւ Մեծ Տիգրանի կայսրութիւնը (95-55) եւ Մոսկուի աշխարհի միացումը կայսրութեան: Այս բաժինն մէջ կը խօսուի նաեւ Երուանդունիներու եւ Արշա-

կունիներու թագաւորութեան, աւատական կազմին, ժամանակի իրաւակարգին, Հայաստանի բաժանումին եւ Արշա-կունեաց թագաւորութեան վերջաւորութեան մասին՝ 428 թուականին: Այս բոլորին մէջ շատ քիչ բան կայ Բալահովիտի եւ Մոսկուի աշխարհի վերաբերեալ. աւելի Հայոց ընդհանուր պատմութիւն է՝ քան թէ Բալահովիտի:

Երկրորդ մասը կը հայի արարական արշաւանքներուն, անոնց հետեւանքներուն եւ ապա Բաղարատունեաց թագաւորութեան, Որդուկեաց տիրապետութեան ընթացքին եւ Բալուի վրայ: Մոսկուի արշաւանքները կը փակեն այս երկրորդ մասը. այս մասին մէջ եւս կան երկար տեղեկատուութիւններ ամբողջ Հայաստանի մասին, ընդարձակ ծանօթութիւններ պատմական անցքերու վերաբերեալ:

Երրորդ մասը Զախսուրեանի գրքին գլխաւոր մասն է, որ կը սկսի Օսմանեան տիրապետութեամբ Հայաստանի վրայ (1514-1919): Այս մասին մէջ եւս հեղինակը երկար եւ մանրամասն կը դրէ թուրքերու ծագումին, անոնց արշաւանքներուն, անոնց տիրակալութեան մասին Հայաստանէն մինչեւ Վոսիորի ավերը: Մասնաւորապէս կ'անդրադառնայ Բարձր Հայքի դրաւումին, անոր վարչական կազմին եւ բաժանումին, հողատիրական դրութեան եւ Հայերու հոն վայելած դիրքին եւ ազդեցութեան: Հոս կ'ընդարձակօրէն կը խօսի քրտական աշխրհներու եւ անոնց ծագումին, աւարաւորութեան եւ կռիւներուն, Հայերու անոնց հետ ունեցած կապերուն եւ դրացնութեան մասին: Այս բաժինն մէջ կան ընդարձակ տեղագրութիւններ եւ մանրամասնութիւններ, քաղաքացիական Ձէլէպի թուրք աշխարհագրէն: ԺԳ. ղուլսով կը սկսի Բալուի բուն պատմութիւնը. հոս ընդարձակ տեղեկութիւններ կը տրուին Բալուի ընկերային եւ քաղաքական կեանքին, եւ մանրամասն տեղագրութիւն մը՝ Բալուի բոլոր դիւղերու մասին:

ԺԷ. գլուխով հեղինակը կը սկսի պատմել Ա. համաշխարհային պատե-

րագը (1914-1918): 1915ին Հայոց տեղահանութիւնն ու Եղեռնը, կամաւորական խումբերու կազմութիւնը եւ անոնց կատարած դերը: Հոս կ'ընդլայնուի մէջ ապրող Բալուցիներուն, անոնց խմբաւորումներուն, սփիւռքի մէջ ունեցած կազմակերպութիւններուն, դպրոցներուն եւ Հայրենասիրական գործունէութիւններուն:

Գիրքը կը փակուի Հայերէն եւ անգլերէն՝ բովանդակութեան զոյգ ցանկե-

*) Մատենադարանի բաժնին մէջ ցանկալի էր որ Նշուէր նաեւ հետեւեալ տեղագրական հրատարակութիւնը. Հ. ՄԻՔԱՅԵԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ, Հայաստանի բերդերը, Վենետիկ - Ս. Ղազար 1970, ուր յատկապէս կը խօսուի նաեւ Բալուի եւ Մոսկուի աշխարհի մասին (էջ 91-96): ԽՍՀՄ.

րով. ունի հայ եւ օտար աղբիւրներու ճոխ մատենադարաններ մը՝ եւ քաղաքացիական ճեղքներու մէջ Հայ ժամանակագրական ձեռագիր աղբիւրներէ, ԺԱ-ԺԹ դարերուն վերաբերեալ, ինչ որ աւելի արժէք կու տայ այս աշխատութեան:

Մենք կը շնորհակտանք Պր. Յարութիւն Զախսուրեանը, իր այս ազգասէր գործին համար, որ իբրեւ կոթող մը պիտի մնայ մեր ապագայ սերունդին, յիշատակ Բալահովիտի, Բալուի, Հաւաւի եւ ուրիշ քաղաքի գիւղերու Հայրենակիցներու սերունդներուն:

Այս գիրքը, ինչպէս նաեւ ուրիշ ազգագրական գրքեր՝ զոր վերեւ թուարկեցինք, պիտի մնան մէկ մէկ վաւերագրեր ցոյց տալու համար դալիք սերունդներուն՝ թէ մենք Հայերս ունէինք խոշոր Հայրենիք մը, ուր դարերով ապրեցին մեր Հայրենիքը:

Հ. ՄԻՔԱՅԵԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՄԻԽԻԹԱՐ ԱՐԱՄԱՀՕՐ ՀՐԱՏԱՐԱԿ- ԶԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Գրեց

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

Վենետիկ - Ս. Ղազար 1980, էջ 160:

Նախ 1977 թուին ձեռագրեցի մէջ, ապա առանձին հատորով, մեծադիր, փառաւոր ու չքեղ հրատարակութեամբ եւ աւելի ամբողջացուած ձեւով, ինչպէս որ արժանի է Միխիթար Արքայի յիշատակին, լոյս տեսաւ Միխիթար Արքայի հիշատակի քաղաքացիական առաջնութիւնը գիրքը, աշխատասիրութեամբ հրատարակւող Միխիթարեան Միաբանութեան անդամ Հայր Սահակ Վրդ. Ճեմճեմեանի:

Հատորը լոյս է տեսել 1980 թուին, Վենետիկում (Ս. Ղազար) Միխիթարեան

Միաբանութեան տպարանից, որի ծախսը սիրայօժար հոգացել են Մանուկեան եղբայրները, իրենց ծնողներին՝ Օննիկ եւ Մարիուշա Մանուկեանների բարերաստիկ ամուսնութեան 50ամեակի առթիւ:

Այս գեղեցիկ հատորը, որ ունի 160 մեծադիր էջեր, քաղաւոր է Միաբանութեան ընդհանուր Արքայի՝ Հայր Պօղոս Վրդ. Անանեանի մի քանի ամփոփ, լուսարանիչ ու զնահատական խօսքերով եւ նուիրումով է Միխիթարեան Միաբանութեան հիմնադիր Միխիթար Արքայի հեղինակած ու հրատարակած գրքերին:

Հայր Ճեմճեմեանը խորագրին ուսումնասիրութեամբ, դրաւոր վաւերագրերի կարեւոր նմոյշների նմանահանումով օրինակներով, եւ տպագիր գրքերի խորագրերի ու կարեւոր էջերի սեւ-սպիտակ ու գունաւոր պատկերներով, մի շարք քարտեզների գեղեցիկ ու փայ-

լուն թղթի վրայ տպագրութեամբ, նըկարագրում է այն գերագոյն ճիշդը, որ սրտցաւ ու նուիրում ոգով թափել է Մխիթար Արքայաւորը՝ գրքերի տպագրութեան ու հրատարակման խնդրում:

Հայր Ճեմճեմեանը օգտագործելով Մխիթարեան Միաբանութեան մօտ առկայ եւ մինչեւ այժմ չուսումնասիրուած գրքերն ու գրաւոր աղբիւրները, պարզ ու հետաքրքիր չարագրութեամբ, գըրքերի տպագրութեան ճիշդի առնթներ՝ նկարագրում է նաեւ այն ուշադիր, բըծախնդիր եւ միաժամանակ տաղտկալի եւ ջիղ ու եռանդ մաշեցնող աշխատանքը, որ երաշխորէ Արքայաւոր տարել է իր հրատարակած թէ՛ գրքերի եւ թէ՛ նկարների վաճառման համար: Այս խընդրում եւս Արքայաւոր նպատակը, աւելի շատ եւ աւելի փոքր, եղել է գրքերի տպագրումը եւ մշակութային գծով օգտակար լինելու հանգամանքը՝ քան թէ նիւթական նպատարը:

Թէեւ իւրաքանչիւր նոր գրքի տպագրութիւն իր առանձին հոգն ու դժուարութիւնն ունի, բայց ամէնից մտահոգիչը՝ նախ մեծածաւալ, ապա միանգամայն նոր ու առաջին անգամ տպագըրուելիք աշխատութիւններն են, որոնց մէջ եւս Մխիթար Արքայաւորը լաւագոյնս կատարել է իր հրատարակչական առաքելութիւնը: Դրանցից յիշենք Աստուածաշնչի 1733 թուի հրատարակութիւնը, որ վատարուել է աւելի գիտական ու համեմատական ձեւով, ապա Հայկազեան մեծածաւալ ու մեծարժէք բառարանը, բաղկացած երկու ստուարածաւալ հատորներից, տպուած 1749 եւ յետ Արքայաւոր մահուան 1769 թուերին:

Կարեւոր է յիշատակել նաեւ տպագրութեամբ քարտէզները, որոնք առանձնապէս կարեւոր տեղ են բռնում վերջիւնում բառարանում, իրենց ճոխ դժագրութեամբ, որոնք են՝ Համատարած աշխարհացոյցը, Մոլորակների ըմբացքը, Աստղալից երկիմբը և Աւետեաց երկիրը, որոնցից յետոյ գալիս է Աշխարհ Հայոց Հայաստանեայց ըստ փիմ եւ մոր աշխարհագրաց, 1751 թուին փորագրուած ճոխ ու բարդաքանդակ քարտէզը, տպագրութեամբ երկրորդ հատորում, հաւանաբար ըստ Մխիթարի ցանկութեան եւ կտակին:

Գիրքն ուսումնասիրողի ճիշդի եւ պրպտումների վաւերականութեան մի այլ գեղեցիկ ապացոյցը՝ առատ ու լուսարանիչ լուսանցագրերի գոյութիւնն է, որ ամէն մէկ Կարեւոր խնդրի առթիւ, աւելի մանրակրկիտ ու մանրադնին լուսարանութիւն է տալիս՝ քըննարան ու վաւերագրական աշխատանքների համար:

Գրախօսողս ուրախ է, որ Մխիթար Արքայաւոր մի տպագրութեան Աստուածաշնչական պատկերների կամ առաջին հայերէն պատկերագրերի (ալբոմի) երեւան բերողն է եղել, մի աննշան ծառայութիւն մատուցանելով հայ մշակոյթի անխոնջ մշակին, երախտաւոր աշխատանքի վիթխարի գործիչին, որի հանդէպ միշտ էլ իր խորն հիացմունքն է ունեցել:

Թող յաւէտ անմեռ մնայ Մխիթար Արքայաւոր յիշատակը, իր հաւատարիմ հետեւողների անխոնջ աշխատանքներով:

ԼԵՒՈՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ PUBLICATIONS REÇUES

ԱՐԲԱՀԱՄԵԱՆ ՍԵՐԳԷՅ ԳԵԱՆՋՈՒՄԻ, Ժամանակակից գրական հայերէն, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտկչ., 1981, էջը 391, տպք. 2000:

ԱՌԱՅԵԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՌԱՖԱԵԼԻ, Լեզուական աշխարհի ներքին կերպաւորումը եւ արտաքին վերաբերութիւնը, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի հրտկչ., 1981, էջը 392, տպք. 2500:

ԱԼԱԶԱՋԵԱՆ ՍՏԵՓԱՆ ՎԵՂԻԱՅԻ, Ոսկեգոյն ծիրկաքիմ. Վիպական, Երեւան, «Սով. Գրող» հրտկչ., 1981, էջը 471, տպք. 15·000:

ԱԼԻՇԱՆ ՂԵՒՈՆԴ, Երկիր: Բնագիր, յառաջաքան եւ ծանօթագրութիւններ՝ ՍՈՒՐԷՆ ՇՏԻԿԵԱՆ, Երեւան, «Սովետական Գրող» հրտկչ., 1981, էջը 390, տպք. 51·000:

ԱՂԱՍԱՔԵԱՆ ՍՈՒՐԷՆ ԲԱՐԴՈՒՄԻ, Յօդուածներ, Դիմանկարներ, Յուշեր, Երեւան, «Սովետական Գրող» հրտկչ., 1982, էջը 368, տպք. 5000:

ԱՂԱՅԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ, Երկիր. Հեքիաքներ եւ պատմաւածքներ, Երեւան, «Լոյս» հրտկչ., 1981, էջը 272, տպք. 50·000:

ԱՅՎԱԶԵԱՆ ԱՐԳԱՄ ԱՐԱՐԱՏԻ, Նախիջեւանի պատմաճարտարապետական յուշարձանները, Երեւան, «Հայաստան» հրտկչ., 1978, էջը 133, տպք. 1·500:

ԱՅՎԱԶԵԱՆ ՍՈՒՐԷՆ ԲԱՆՇԻԻ, Խնձորեսկ. Վէպ, Երեւան, «Սովետական Գրող» հրտկչ., 1982, էջը 492, տպք. 15·000:

ԱՆԴՐԷԱՍԵԱՆ ԲԻՒՐԱԿՆ ՎԱՐԴԳԷՍԻ, Շեքսպիրը հայերէն. Մատենագիտութեամբ

Թիւն, Երեւան, «Սովետական Գրող» հրտկչ., 1981, էջը 40, տպք. 3000:

ԱՌԱՔԵԼԵԱՆ ԳՈՒՐԳԷՆ ԱՇՈՏԻ, Գրականութիւն՝ ծնունդ պարբերական մամուլում, Երեւան, «Հայաստան» հրտկչ., 1971, էջը 248, տպք. 3000:

ԱՍԼԱՆԵԱՆ ԱՐՇԱՄ ԱՐՇԱՄԻ Եւ ԳԸՐԴԵԱՐԵԱՆ ՅԱԿՈԲ ՂԱԶԱՐՈՍԻ, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառօտ քառաքան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1981, էջը 208, տպք. 5000:

ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՄԱԿԻՉ ՎԱՀԱՆԻ, Ստեփան Շահումեան, Երեւան, «Հայաստան» հրտկչ., 1978, էջը 646, տպք. 10·000:

ԱՓԻՆԵԱՆ Ժ. Բ., հրատարակչական խմբագիր, Շուշանիկ Կուրդիմեան. Բանաստեղծութիւններ, Արձակ Էջեր, Պիեսներ, մամուլներ, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտկչ., 1981, էջը 234, տպք. 3000:

ԲԱՐԱՅԵԱՆ ԼԵՒՈՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ, Դըրուագներ Հայաստանի զարգացած փոքրիկ դարաշրջանի պատմագրութեամբ. Ը-ԺԳ դարեր, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1981, էջը 392, տպք. 2000:

ԲԱՐԱՅԵԱՆ ՖՐԻԷԱ ՍՈՒՐԷՆԻ, Միջմադարեան Հայաստանի գեղարուեստական խեցեղէնի զարգացումները, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1981, էջը 89, 22 թերթ տեւ-ճերմակ, 2 թերթ գունաւոր նկարներ, տպք. 3000:

ԲԱԼԱՅԵԱՆ ՉՕՐԻ ՀԱՅԿԻ, Յաւ (Պատմական վէպ), Երեւան, «Սովետական Գրող» հրտկչ., 1978, էջը 215, տպք. 30·000: